ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY

ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
nkhnkikyan@yahoo.com

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ.Թ.Ա. VII–VI ԴԱՐԵՐՈՒՄ
(ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

Բանալի բառեր՝ *հյուսիս-արևելյան Հայաստան, ներօջախային խմբեր, երկաթ III դարաշրջան, ամրոցներ-դամբանադաշտեր, Ուրարտու-Հայաստան*

Հայոց պատմության «Ուրարտու» և «Երվանդյան Հայաստան» ակամա տարանջատվող պատմաշրջանների կապը հստակեցնելու ուղղությամբ տարվող աշխատանքները աղբյուրների սակավության պատճառով հակասական տեսակետների են հանգեցրել: Սրությամբ է զգացվում կազմավորվող պետության ծայրամասերի թույլ ուսումնասիրված լինելը, ինչի հետևանքով այդ տարածքների պատմական իրավիճակը, որի նշանակալիությունը ընդհանուր պատկերի պարզաբանման համար նվազ կարևոր չէ, քան կենտրոնականինը, մշուշոտ է ուրվագծվում: Ներկա հոդվածի նպատակը՝ հարցի կարևորությունը մատնանշված[1], հյուսիս-արևելյան Հայաստանի հնագիտական հետազոտությունների արդյունքների և դրանք գրավոր աղբյուրների կցկտուր տվյալների հետ համադրելու միջոցով, պատմական իրավիճակի, բայց առաջին հերթին՝ հայկական հողերի միավորման ուղղությամբ առկա գիտելիքները

[1] **Տիրացյան Գ.,** Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. – մ.թ.ա. III դ. վերջ), Երվանդունիների առաջին թագավորության ժամանակաշրջանը (մ.թ.ա. VI դ. առաջին կես) («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1980, № 4, էջ 84–95):

հնարավորության սահմաններում հարստացնելուն միտված փորձ է:

Տարածքը, ինչպես հայտնի է, առաջին անգամ հիշատակում է Արգիշտի I-ը, որը ներկայացնելով տարածաշրջան կատարած իր երկու արշավանքները, հայտնում է, թե առաջինի ժամանակ նվաճելով Էթիունին, հասել է Ուդուրի-Էթիուխի (ըստ Ն.Վ. Հարությունյանի՝ Ուդուրի ցեղի Էթիուխի երկիրը), իսկ երկրորդ անգամ, հաղթելով լճամերձ Կիեխունի քաղաքի երկիրը, հասել է Իշտիկունիվ և ապա Ալիշտու քաղաք[2]: Ենթադրվում է, որ Ալիշտուն գտնվել է – Դիլիջան-Իջևան հատվածում: Մեկ այլ կարծիքի համաձայն, այն կարող է համադրվել Ղազախի Սարը-թեփե բնակավայրի հետ[3]: Միասնական կարծիք չկա և Ռուսա I-ի (մ.թ.ա. 735–713 թթ.)՝ Ծովինարի արձանագրությունում թվարկած, լճի այն կողմում գտնվող 19 երկրների տեղայնացման վերաբերյալ հետազոտողները (Ի.Ի. Մեշչանինով, Գ.Ա. Մելիքիշվիլի, Բ.Բ. Պիոտրովսկի, Ն.Վ. Հարությունյան, Ս.Ա. Եսայան) դրանք ընդհանուր կերպով տեղադրում են Կրասնոսելսկի, Իջևանի, Շամշադինի, Դաշքեսանի, Փոքր Կովկասի լեռնաշրջաններում[4]:

Գրավոր աղբյուրների կցկտուր տեղեկություններն ու պեղումների արդյունքները չեն մերժում Արգիշտի I-ի՝ Վանաձորով Սևան շարժվելու երթուղին.

---

[2] **Меликишвили Г.А.** Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, с. 212, 216, 237, 248, 249, 261; **Арутюнян Н.В.** Корпус урартских клинообразных надписей (КУКН), Е., 2001, с. 156–162(Ըստ հեղինակի, Իշտիկունիվ քաղաք-պետությունը Սևանի արևմտյան մասում է, ավելի ստույգ՝ Հրազդանի շրջանում):

[3] Իջևանի Թևրաքար վայրի փոքր բնակավայրը, որի մոտ կան մ.թ.ա. IX–VIII դդ. դամբարաններ, թվագրված է մ.թ.ա. VII–V դդ. (**Դովլաթբեկյան Ս., Համայակյան Ս., Սիմոնյան Հ.,** Իջևան քաղաքի մինչքրիստոնեական հուշարձանները, Ե., 2009, էջ 74-75): Խրտանոցի ամրոցը ուսումնասիրված չէ (տե՛ս **Мартиросян А.А.** Раскопки в Головино, Е., 1954, с. 45): Մ.Վ. Նիկոլսկու կարծիքով, «Գեղարքունի» նախնական անվանումը կապվում է Կիեխունիի հետ (**Никольский М.В.** Клинообразные надписи Закавказья (Материалы по археологии Кавказа (МАК), вып. V, М., 1910, с. 106–110). ըստ շրջանառվող տեսակետի, Գեղարքունին ծագում է *Ue̯likuni* (*Ulikuhi*) երկրանունից (Գավառի շրջան), տես՝ **Капанцян Гр.** Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Е., 1940, с. 22: **Ջահուկյան Գ.,** Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները (ՊԲՀ, 1981, № 3, էջ 48–63): Ս. Երեմյանի կարծիքով Աղստև անվանումը Ալիշտուից է առաջացել (**Երեմյան Ս.**, Էրեբունի-Երևանը միջազգային առևտրի մայրուղիների վրա («Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1969, № 12, էջ 19): Սարը-թեփեի մասին՝ **Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.**, Մեծամոր, Ե., 1973, էջ 58:

[4] УКН, с. 329. **Арутюнян Н.В.** Топонимика Урарту, Е., 1985, с. 67.

դրա վկայություն կարող են հանդիսանալ Մայիսյանի, Վանաձորի, Մակարաշենի ու Խրտանոցի դամբարաններից, ուրարտական և տեղական մշակույթներին պատկանող նյութերի համատեղ հայտնաբերումը[5]: Վերջիններիս շարքում են և գնդաձև իրանի վերին հատվածում կամարաձև զարդ ու կանթի կենտրոնի սեպաձև ելուստին հասնող ընդերկայնական ճեղք ունեցող սափորներ (նկ. 1), որոնք բնորոշ են հիմնականում Աշոցք-Տավուշ տարածքին: Սևանից Գյումրի ու Փամբակի լեռնաշղթայից հարավ գտնվող հուշարձաններում այդպիսիները հազվադեպ են հանդիպում (Քուչակի դամբարանները, իսկ Թեյշեբանիի քաղաքային թաղամասերից և միջնաբերդից հայտնաբերվածները, հավանաբար, հյուսիսից վերաբնակեցվածներն են բերել մ.թ.ա. VII դարի կեսերին՝ քաղաքը կառուցելու ժամանակ)[6]: Թերևս խեցանոթների այս մանրամասները կարող են որպես Էթիունիի հյուսիսային հատվածը հանդիսացող տեղական օջախին բնորոշ հատկանիշ դիտվել: Սովորական են և կանթերի վրա շարված վերադիր «կոճակները»: Նման զարդերով բեկորներ, այլ տեսակների հետ, որոնց շարքում են և փիալաձև թասերը, հայտնաբերված են և Վանաձորի Քոսի-ճոթեր ու Թագավորանիստ բնակավայրերից[7]: Ցավոք, տարածքի ամրոցների, բնակավայրերի անբավարար հետազոտված լինելը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել Փամբակի դաշտի բնակավայրերի վերաբերյալ. դա կհարստացներ Տավուշի ամրոցների քննությամբ ստացված գիտելիքները: Իրոք, հիմնականում Ս.Ա. Եսայանի և Ս.Ս. Չիլինգարյանի աշխատանքները որոշակի պատկերացում են տալիս արքաների կողմից ամրություններ, ամրոցներ ու քաղաքներ անվանված կա-

---

[5] **Мартиросян А.А.** Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, с. 202–223, рис. 79–80, 84, 85, табл. XXI–XXII. **Նույնի՝** Раскопки в Головино, Е., 1954, հմմտ. աղ. IV, XIII: Մայիսյանի դամբարանի անտիպ նյութերին ծանոթացնելու համար շնորհակալություն ենք հայտնում Լ.Ա. Պետրոսյանին:

[6] **Мартиросян А.А.** Город Тейшебаини, Е., 1961, с. 101–102, р. 41. **Պետրոսյան Լ.**, Քուչակ-1 դամբարանադաշտի մշակույթը (մ.թ.ա. IX–VI դդ.) (ԼՀԳ. № 3, 2016):

[7] **Խանզադյան Է.**, Հետախուզական պեղումներ Կիրովականի մերձակայքում (Տեղեկագիր հասարակական գիտությունների (ՏՀԳ), № 10, 1962, էջ 75–78): **Փալանջյան Ռ.**, Թագավորանիստի մ.թ.ա. VII–V դդ. խեցեղենի շուրջ (Հին Հայաստանի մշակույթը (ՀՀՄ), հ. XIV, Ե., 2008, էջ 175–178): Մակարաշեն-Վանաձոր ճամփեզրին պահպանված են ևս 2 ամրոցի ավերակներ. տես՝ **Мартиросян А.А.** Армения в эпоху…, էջ 202:

ռույցների վերաբերյալ[8]. դրանք որոշակիորեն առանձնացող խմբեր են ձևավորում[9]: Ս.Ա. Եսայանը իր չափագրած, հետազոտած և քարտեզագրած 56 ամրոցներից 19-ում հետախուզական պեղումներ կատարելով պարզել է, որ 6-ը գործել են երկաթի դարաշրջանում, իսկ 13-ը՝ մ.թ.ա. VII/VI–V դդ.: Մնացած 37 ամրոցների մի մասի թվագրությունը տրված է վերգետնյա նյութի հիման վրա. 6-ը վերագրված են երկաթի (I հազ. սկիզբ), իսկ 10-ը, որոնցից երկուսը հիմնադրվել են I հազ. սկզբում, գործել են և մ.թ.ա. VI–V դդ.: Կառույցներից 21-ի թվագրությունը պարզ չէ. դրանց շարքում են և ժամանակավոր բնույթի անասնանոց-փարախներն ու դիտակետ ամրությունները:

Կառույցների տեղադրմամբ ստացված խմբերը պայմանականորեն առանձնացնում ենք՝ I – «Այրում-Նոյեմբերյանի» (Դեբեդի հովտում), II – «Շավարշավանի» (Ջողազի գետահովտում), III – «Ենոքավանի» (Աղստևում), IV – «Ծաղկավանի» (Հախումի գետահովտում), V – «Բերդ-Նորաշենի» (Տավուշի գետահովտում), VI – «Ղրղի-Այգեձորի» անվանումներով[10] (տես՝ քարտեզը): Նկատելի է, որ այս կամ այն չափով առանձնացող խմբերում ներառված կառույցները քանակապես տարբեր լինելով, երկու խոշոր խումբ են ձևավորում. 29-ը տեղակայված են Դեբեդ-Աղստևի հովիտներում (I–III խմբեր), իսկ 24-ը՝ Հախում-Ասրիկ տարածքում (IV–VI խմբեր. 56-ի շարքից Սևանի արևելյան

[8] Քաղաքների և բնակավայրերի պարբերացման, առանձնահատկությունների և գործառույթների քննությունը տես՝ **Բոբոխյան Ա.,** Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում (պարբերացման փորձ), «Պատմամշակութային արգելոցթանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն», պրակ. I, Ե., 2014, էջ 40–75:

[9] Տես՝ **Есаян С.А.** Древняя культура племен северо-восточной Армении, Е., 1976, с. 32–98; **Чилингарян С.С.** Первобытные памятники Ноемберянского района, автореф. канд. дисс., Е., 1971; **Չիլինգարյան Ս.**, Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները (ՊԲՀ № 1, 1968, էջ 221–231): **Չիլինգարյան Ս.**, Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում (ԼՀԳ, № 2, 1971, էջ 69–72):

[10] Առկա գիտելիքներն ու պատկերացումները ամբողջական կլինեին պատմական Ուտիք երկրամասի՝ Երասխից արևմուտք, Արցախի և Կուրի միջև գտնվող տարածքի (**Շիրակացի Ա.**, Մատենագրություն, Ե., 1979, էջ 296; **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմության ուսումնասիրության հիմունքները (ՊԲՀ, № 3, 2015, էջ 219–220) հուշարձանների ուսումնասիրված լինելու դեպքում: Ըստ առկա տվյալների, տարածքում եղել են թե՛ ամրացված (կիկլոպյան), թե՛ չպաշտպանված բնակատեղիներ: Վերջիններիս շարքում են և Աղստև-Տավուշ-Կուր տարածքը զբաղեցնող խումբը կազմող բնակատեղիները.տես՝ Древнейшие государства Кавказа и Средней Азии (Археология СССР (АС), М., 1985, с. 43–44).

մասի 3 ամրոցները շրջանցված են):

Առաջին հայացքից թվում է, թե արևմտյան և արևելյան հատվածներում այդ կառույցները գրեթե հավասար են տեղաբաշխված (տարբերությունը՝ 5 կառույց), սակայն դա իրականությանը չի համապատասխանում: Համոզվելու համար բավական է հետևել կառույցների ժամանակագրական տեղաբաշխվածությանը: Վաղ շրջանի (հիմնականում մ.թ.ա. I հազ. I քառ.) ամրոցներից 7/8 (Պոպլոզ-գաշ, Բարձրաբերդ, Աստղի-բլուր, (Խրտանո՞ց), Արճիս, Բերդաթաղ, Պատաշար, Արամի-բլուր) Դեբեդ-Աղստև տարածքում են, իսկ երեքը՝ (Տանձուտ, Մասմալար, Սեպրիկ) Հախում-Ասրիկի, ինչը և 32 կառույցի (53–21=32) տոկոսային հարաբերությամբ կազմում է 25% և ≈ 9%: Այս տվյալները ցույց են տալիս, որ արևելյան հատվածը թույլ է բնակեցված եղել: Նույնը դիտվում է նաև մ.թ.ա. I հազ. II քառորդում. արևմտյան հատվածում այդ ժամանակին են պատկանում 7 ամրոց (Սբ. Նահատակ, Աստղի-բլուր, Բերդատեղ, (Իջևա՞ն), Թղկուտ ձոր, Կոթաքար, Արմունկ-աղբյուր), իսկ Հախում-Ասրիկում՝ ընդամենը 2-ը (Տանձուտ, Ազատավան). ընդհանուր հարաբերակցությունը կազմում է 14/15:5 կամ ≈ 44% և 15,6% (3:1 տարբերությամբ): Պատկերը կտրուկ փոխվում է մ.թ.ա. VI–V դդ.. Դեբեդ-Աղստև տարածքում: Այդ ժամանակին են պատկանում Պոպլոզ-գաշը, Թմբադիրը, II–IV Շահլամաները (15,6%): Արևելյան հատվածում՝ 15-ը (Նորաշեն, Պիլուր-պատ, Կալքար, Սև-սև քարերի բլուր, Սև-սև քարերի թախտ, Բախրի խաչ, Բերդաքար, Սալքար, Տավրի-պաշ, Սրտներ, Դաշտի, Կեռ-քար, Բերդ, Կարմիր Արեգունի, Ձորաբերդ. ≈ 47%): Տվյալները ցույց են տալիս, որ վաղ փուլում արևելյան հատվածում համեմատաբար «խիտ են բնակեցված եղել Նավուրի և Ղրղիի շրջակա տարածքները, իսկ մ.թ.ա. VI–V դդ. նախորդի համեմատությամբ դիտվող ամրոցների աննախադեպ աճը (≈ 47%) այլ բացատրություն չի գտնում, քան բնակչության ներհոսք: Դժվար է ժողովրդագրական նման պայթյունը բացատրել սոսկ բնակչության բնական աճով, ինչը սպասելի կլիներ նաև արևմտյան հատվածում (աճը մ.թ.ա. VI–V դդ. ≈ 15,6% է), որտեղ, սակայն այն չի դիտվում: Հասկանալի է, որ ընդհանուր պատկեր ուրվագծող այս տվյալները վերջնական չեն, բայց եթե ընդունենք նույնիսկ, որ դրանք ամբողջական չեն և մոտավոր պատկեր են ներկայացնում, այնուամենայնիվ, հարկ կլինի համաձայնվել, որ դրանք միանգամայն բավարար են արևմտյան և արևելյան հատվածներում տարբեր

ժամանակներում բնակչության անհամաչափ տեղաբաշխվածության մասին եզրակացության հանգելու համար, քանի որ հետագա աշխատանքները հազիվ թե փոխեն այն: Այնուամենայնիվ, այնքանով, որքանով այս տվյալները կապվում են այս կամ այն ժամանակահատվածի պատմական իրավիճակի հետ, դրանք լրացուցիչ հիմնավորումների անհրաժեշտություն են առաջացնում: Ժամանակագրական առումով հարցի լուսաբանմանը կարող էին օգնել դամբարանադաշտերի (չի անտեսվում անասնապահության դերը և հոտերը հեռավոր արոտավայրեր տանելու հանգամանքը) քանակական փոփոխությունները:

Տարածաշրջանի հուշարձանների այս տեսակի անհամաչափ հետազոտված լինելը թույլ չի տալիս բացարձակեցնել առկա թվական տվյալները, ինչը չի նշանակում, թե կարելի է ընդհանրապես անտեսել եղած արդյունքները. առանձին, լավ հետազոտված տարածքներ բացատրություն պահանջող որոշակի պատկեր են ներկայացնում: Առաջին հերթին ուշադրություն է գրավում Դիլիջանի շրջակա տարածքներում գտնվող դամբարանադաշտերի խտությունը մ.թ.ա. I հազ. I քառորդում (Ռեդկին լագեր, Ջարխեչ, Գոլովինո, Պապանինո, Խրտանոց): Համոզիչ է Ս.Ա. Եսայանի այն կարծիքը, որ համեմատաբար փոքր տարածքում նույն ժամանակին (մ.թ.ա. I հազ. I քառ. – Օ.Խ.) պատկանող հուշարձանների նման առատությունը խոսում է ոչ միայն մշակույթի տեղական տարբերակի մասին, այլև ցույց է տալիս դրանց պատկանելը Աղստևի հովիտը զբաղեցրած ցեղերի կամ ցեղամիության բնակիչներին[11]: Ուշադրություն է գրավում ևս մեկ հանգամանք. նշված դամբարանադաշտերում մ.թ.ա. I հազ. I քառ. թվագրվող դամբարանադաշտերը մ.թ.ա. VIII–VII դդ. նվազում են, ինչը ենթադրել է տալիս, թե ժամանակագրական հիմք ունեցող այդ տատանումների պատճառը, ըստ երևույթին, ուրարտական զինուժի կրկնվող արշավանքներն են եղել: Դրանց երթուղիներից մեկը Բազում-Փամբակ լեռնաշղթաների միջև ձգվող տարածքով (Մայիսյան, Վանաձոր, Մակարաշեն, Խրտանոց) անցել է Դիլիջանի արգելոց-Աղստև հատվածով: Դիլիջանի արգելոցի մերձակա ամառային արոտավայրերը, ուր գտնվում էին և անասունների հոտերը արոտավայր բերած բնակիչների դամբարանները (արևմտյան հատված), ուրարտացիների տեսադաշտում են եղել, և արքաների հաշ-

[11] **Есаян С.А.**, նշվ. աշխ., էջ 131:

վետվությունները, որոնք հաշվապահական ճշտությամբ են ներկայացնում տարված անասունների գլխաքանակը, այդ են վկայում: Պերճախոս են նաև բնակչության գերեվարումները մատնանշող թվերը: Այդ վերաբնակեցումները հանգեցնում էին բնակչության նվազմանը: Չի բացառվում, որ ուրարտական զինուժի երթուղուն հարող տարածքների բնակչությունը, արդեն իսկ հպատակեցված լինելով, պարտավորված լիներ հարկ վճարել: Բնական է, որ նման իրավիճակում անասունների հոտերը կտարվեին նոր՝ բնակավայրերին մոտ գտնվող արոտավայրեր, ինչը և կարծես ցույց է տալիս, թե որն է եղել Աղստևի հովտի դամբարանադաշտերի նվազման պատճառը:

Հարցի պատասխանի հստակեցմանը կարող էին օգնել և Ժ. Դը Մորգանի կողմից Այրումի (Շեյթան-դաղ), Ալավերդու և Ախթալայի (Մուսիերի) մերձակայքում պեղած, շուրջ 900 դամբարաններից[12] հայտնաբերված նյութերը, եթե դրանք համաչափ հրատարակված լինեին: Դա խոչընդոտում է տարբեր փուլերի պատկանող դամբարանների քանակական փոփոխությունների վերհանմանը: Դրանք կարող էին հարստացվել Ա.Դ. Երիցյանի (23 դամբարան), Ն.Յա. Մառի, Ե.Ս. Թաքայշվիլու Ակներում (40 դամբարան) և այլ հետազոտողների կողմից տարածաշրջանի (Դեբեդի հովիտ և Լալվար) մի շարք դամբարանադաշտերում կատարած աշխատանքների արդյունքներով: Այդուհանդերձ, որքան էլ սակավ և անհամաչափ, առկա նյութը ենթադրել է տալիս, որ կյանքը արևմտյան հատվածում էական ցնցումներ չի կրել: Այն մ.թ.ա. I հազ. I կեսում անընդմեջ զարգացում է ցույց տալիս, բայց ոչ դանդաղում, ինչպես Աղստև-Դիլիջան տարածքի դամբարանադաշտերում: Կյանքի անընդմեջ զարգացում են ցույց տալիս և Իջևանից հյուսիս-արևմուտք գտնվող Ենոքավան գյուղի մերձակայքի Աստղի-բլուրի դամբարանադաշտում պեղված դամբարաններից գտնված նյութերը, իսկ Ջարխեչից հայտնաբերվածները մ.թ.ա. VIII–VII դդ. են թվագրվում[13]:

Դատելով դամբարանադաշտերի տեղադրությունից, Իջևանի շրջանի արոտավայրերը մ.թ.ա. I հազ. I քառ. լավագույնս են օգտագործվել: Այդ ժա-

---

[12] **J-de Morgan**, Mission scientifique au Caucase, vol. I, Paris, 1889, **նույնի**՝ La prehistoiare Orientale, vol. III, Paris, 1927, նկ. 301–303, հմմտ. 278-285, 305-306: Գրականության վերաբերյալ տես՝ **Мартиросян А.А.** Раскопки в Головино, с. 10–19:

[13] **Խնկիկյան Օ.**, Դամբարանների պեղումներ Կոյբիշև գյուղում (ԼՀԳ, № 5, 1987, էջ 79–87):

մանակին պատկանող դամբարաններ են պեղված նաև Իջևանում ու շրջանի Լուսաձոր գյուղի մոտ գտնվող Պակեր հուշարձանում: Ցավոք, դամբարանադաշտերի քննությունից ստացված տվյալների անբավարարությունը թույլ չի տալիս որոշակի պատկերացում կազմել Աղստև-Ասրիկ միջնատարածքի մասին: Առկա տվյալներով նշված տարածքում ժամանակաշրջանին պատկանող դամբարաններ հայտնի են Քարի գլուխ ամրոցի մոտ (Նավուր), Ներքիշենում (Չորաթան): Պատկերը փոխվում է Ղրղիի մերձակա տարածքներում, որտեղ մ.թ.ա. I հազ. I քառ. դամբարանադաշտերի որոշ կուտակում է դիտվում (Բուղաքար, Եղենկալաձոր, Քարի ձոր, Այղրանի թալան, Քոլագիր-Ղրղիի միջև, Ազատավանի ամրոցի «Կռապաշտի յալ» մեծ դամբարանադաշտը Ղրղիից մոտ 15 կմ հեռավորության վրա): Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այդ դամբարանադաշտերում (ըստ առկա տվյալների) մ.թ.ա. VIII–VII դդ. դամբարանների սակավությունը, ինչը թերևս պայմանավորված լինի ամրոցների լքմամբ (Ղրղի-Մասմալարի մոտ գտնվող Սեպրիկը լքվել է մ.թ.ա. VIII–VII դդ., Ազատավանը՝ մ.թ.ա. VI–V դդ., իսկ Դարանջի դամբարանադաշտում մ.թ.ա. VII–VI դդ. մի քանի քարարկղ են պեղվել): Չանտեսելով տարածքի դամբարանադաշտերի անբավարար հետազոտված լինելն ու պատահականության հանգամանքը, սխալ կլինի բացառել և ուրարտական զինուժի հնարավոր արշավանքների հետևանքներից խուսափելու և սեփական անվտանգության գործոնի դերը: Նման ենթադրությունը, եթե չանտեսվի Արգիշտի I գործունեությունը, լճի արևելակողմի 19 երկրների դաշնության դեմ տարած Ռուսա I-ի հաղթանակը, անհիմն չի թվում: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Ղազախ քաղաքի ծայրամասում գտնվող Սարը-Թեփե (Դեղին բլուր) կոչված բլրի գագաթամասում տեղակայված և ենթադրաբար Ալիշտուին նույնացվող բնակավայրի պեղումներից ստացված արդյունքները: Հայտնաբերված նյութերի շարքում առկա է նաև օձագլուխ ծայրով բրոնզե ապարանջանի մաս (նկ. 2ա), որի ուրարտական մշակույթի նմուշ հանդիսանալը կասկած չի հարուցում[14]: Վերջինիս զուգահեռները հայտնի են Մենուախինիլիից (Մալաքլյու), Էրեբունիից և մ.թ.ա. VIII դ. թվագրվող

[14] **Нариманов И.Г.** Некоторые данные о древнем поселении в окрестностях Казаха (Аз. ССР), КСИИМК, вып. 70, 1957, с. 138–142, рис. 55.

այլ հուշարձաններից[15]: Հետազոտողը ուրարտական ազդեցությանն է վերագրում և Այսրկովկասում մ.թ.ա. I հազ. I կեսում քառաճաղ անիվի երևան գալը (չնայած նշում է ուրարտականի 6–8 ճաղանի լինելը), որը պատկերված է խեցանոթներից մեկի վրա (նկ. 2բ): Չծանրանալով հարցի վրա, նշենք միայն, որ քառաճաղ անիվները Սիրիայում տարածված էին մ.թ.ա. II հազ.[16]:

Հուշարձանի պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ ստորին շերտի նախաուրարտական շրջանի բնակավայրը հրդեհվել է, իսկ բնակիչները վերցնելով անհրաժեշտ իրերը՝ հեռացել են[17]: Այդ է վկայում ստորին շերտում բացված 2 կառույցների (մեկը հասարակական նշանակություն ունեցած շտեմարան, մյուսը՝ երկթեք կտուրով տաճար) հատակի ողջ մակերեսով տարածված, ածխացած հենասյուներից, մոխրից և ածխից կազմված շերտը: Կառույցներից հայտնաբերված նյութերը, որոնք հետազոտողը նախնականորեն թվագրում է մ.թ.ա. I հազ. սկզբով, ներկայացված են ուսերին պարանազարդ ելունդագոտիներ ունեցող կարասներով, ծիսական անոթով, եռագագաթ բռնակներ ունեցող կճուճով, խազված զարդերը սպիտակ նյութով ընդելուզված ամանի բեկորով և այլն: Թվագրության տեսակետից առավել կարևոր են մ.թ.ա. IX–VIII դդ. բնորոշ երկգագաթ ու եռագագաթ ոճավորված կանթերը, բայց հատկապես եռանկյունաձև ուլունքները, որոնք մ.թ.ա. VIII–VII դդ. են թվագրվում (նկ. 2ա): Հրդեհված ու հետո հարթեցված ստորինի վրա տարածվող երկրորդ շերտում բացվել է հետուրարտական շրջանի պալատական խոշոր համալիր, որը հեղինակը համադրելով Շոշի, Պերսեպոլիսի և Համադանի համանման կառույցների ու դրանց սյունասրահների հետ, նախնական կերպով թվագրում է մ.թ.ա. V–IV դդ. (հետագայում I հազ. կեսեր)[18]. Համալիրը կազմված է եղել իրար մեջ ներառված երկու՝ մեծ և փոքր ուղղանկյուն կա-

---

[15] **Куфтин Б.А.** Урартский «колумбарий» у подошвы Арарата (Вестник Гос. музея Грузии, т. XIII б, Тбилиси, 1944, рис. 28). Զուգահեռների վերաբերյալ մանրամասները տես՝ **Мартиросян А.А.** Армения в эпоху…, табл. 24; **Есаян С.А., Амаякян С.Г., Канецян А.Г., Биягов Л.Н.** Биайнская гробница в Ереване, Е., 1991, с. 14, **Деведжян С.Г.** Лори-Берд 1, Е., 1981, рис. 29, с. 69 и др.

[16] **Горелин М.В.** Боевые колесницы Переднего Востока III–II тыс. до н.э. (Древняя Анатолия, М., 1985, с. 183–202, табл. 2–3).

[17] **Халилов Дж.А.** Поселение на холме Сары-тепе (Советская археология (СА), 1960, № 4, с. 68–75).

[18] **Нариманов И.Г.** Находки баз колонн V–IV вв. до н.э. в Азербайджане (СА, 1960, № 4, с. 162–164), տես՝ Древнейшие государства…, АС, т. VIII, М., 1985, с. 44.

ռույցներից, որոնց պատերի լայնքով ու երկայնքով միջնապատերով բաժանված սենյակներ են պատրաստված: Ներքին կառույցի սենյակները բաց դահլիճանման (300 մ^2) տարածք են ձևավորում, ուր և իրարից 2,5 մ հեռավորության վրա «զանգակաձև» երկու խարիսխ է բացվել. դրանց ստորին մասը, ըստ նկարի, զարդարված է ուղղահայաց, իրար զուգահեռ տարված ակոսներով: Այստեղ բացված 12 սենյակների պատերը աղյուսաշար են (36x36x12 սմ), իսկ 2 խարիսխների վրա կանգնեցվել են առաստաղը պահող սյուները: Արտաքին՝ 9 քառանկյուն աշտարակով կառույցի սենյակների մուտքը, ներքին շինության ընդհանուր պատից հեռու լինելով, միջանցքաձև տարածք կամ բակ է ձևավորում: Այստեղ բացվել է 23 սենյակ: Այս կառույցի մանրամասները ուրարտա-ասորեստանյան ճարտարապետությանն են մերձենում. մ.թ.ա. VI դ. մշակույթին են կապվում և հայտնաբերված խեցանոթների ձևերը, որոնց վերաբերյալ տե՛ս ստորև: Նշենք միայն, որ դրանք սակավ են, իսկ համալիրի բոլոր սենյակներում այրված գերանների մնացորդներ՝ կան պալատը ճարակած հրդեհի ապացույցներ:

Սարը-թեփեի ստորին շերտի նյութերը կրկնված են Աղստաֆայի մոտ գտնվող Յասթը-թեփե կոչված հուշարձանից հայտնաբերվածները, որոնք պեղող հնագետները Սարը-թեփեի օրինակով բրոնզից երկաթին անցնելու ժամանակաշրջանին են վերագրել[19]: Հայտնաբերված նյութերի առանձնահատկությունները (ձևավոր կանթերին եռանկյունաձև հանվածքներ, վերադիր կոճակներ, կանթի հիմքում անկյունաձև հատվածքներ, փոսիկներ), որոնք վերաբերում են և Սարը-թեփեին, ընդունելի են դարձնում Է. Խանզադյանի ենթադրությունը՝ բնակավայրը (Սարը-թեփե) մ.թ.ա. VIII դ. ուրարտական զինուժի կողմից ավերված լինելու մասին: Առաջարկվող թվագրության օգտին են խոսում ոչ միայն Սարը-թեփեի տվյալները, (հատկապես օձագլուխ ապարանջանը), այլև այդ նյութերի զուգահեռները, որոնք հարևան Տավուշում և համաժամանակյա այլ հուշարձաններում սովորական են: Էական է և Սարը-թեփեի ստորին շերտի հրդեհման և Յասթը-թեփեում կյանքը կանգ առնելու ժամանակի համընկնումը Տավուշի համաժամանակյա հուշարձանների (արևելյան հատված) նվազման հետ. դա հավանական է դարձնում ուրարտա-

[19] **Мурадова Ф.М., Нариманов И.Г.** О древнем поселении Ясты-тепе (Материальная культура Азербайджана (МКА), т. VII, Баку, 1973, с. 46–55).

կան զինուժի, կարճ ժամանակով տարածքում հայտնվելը:

Արտահայտված ենթադրությանը չի հակասում Աղստև-Հախում երթուղով Սարը-թեփե/Ալիշտու հասնելը, որը կարող էր վերջնական լուծում ստանալ Խաչակ (ներկայիս Ղուշչին) գյուղում գտնված, ենթադրաբար սեպագիր հանդիսացած սալաքարի լուսանկարված կամ գրչանկարված լինելու դեպքում[20]: Դա կարող էր զգալիորեն հստակվել և դամբարաններից հայտնաբերված նյութերի քննությամբ. վերջիններիս շարքում ուրարտական նյութեր չկան: Անմիջապես գյուղի մերձակայքում և դեպի Ձվասար տարածքում (այլ վայրերում ևս), տարբեր տեսակի դամբարաններ պեղած Յա.Ի. Հումմելը և այլ հետազոտողներ, հայտնաբերել են երկաթեդարյան նյութեր[21]: Ուշադրություն են գրավում փոքր-ինչ հյուսիս-արևելք (Գետաբեկ, Խանլար ևն) տեղական մշակույթին բնորոշ սև մակերեսով խեցեղենին զուգահեռ հաճախ հանդիպող նույնիսկ գերակշռող, ձեռքով պատրաստված կոպիտ, դեղնակարմրավուն և մուգ գորշավուն, երբեմն՝ սև մակերեսներին խազմամբ ստացված զարդերը (մեանդրներ, երկրաչափական բնույթի և մարդկանց ու կենդանիների նկարներ) սպիտակ նյութով ընդելուզված պարզունակ խեցեղենի նյութերը (ըստ Յա. Հումմելի՝ «սպիտակ նյութով ընդելուզված խեցեղենի մշակույթ»): Նման խեցեղեն պարունակող դամբարաններում հաճախ են արձանագրված մեջքի վրա, ձգված վերջույթներով թաղումներ: Բնորոշ չլինելով տարածքի և ընդհանրապես Այսրկովկասի կծկած վերջույթներով, կողքի պառկեցված թաղումներին՝ դա հատկանշական է սկյութներին և հյուսիսային շրջանների մի շարք ցեղերի: Դատելով հնագիտական նյութից, վերջիններիս վաղ խմբերը երևալով Շակաշենում մ.թ.ա. II հազ. վերջում, հետագայում միախառնվել են բնիկներին և տարածաշրջան մուտք գործած սկյութներին: Այս տվյալները հաստատելու է գալիս Մ.Ն. Պոգրեբովայի այն կարծիքը, որ պեղված դամբարանները (խոսքը վերաբերում է Ա.Ա. Իվանովսկու պեղումներին) ժամանակագրո-

---

[20] «Սեպագրի» իսկությունը ստուգելու համար շրջան գործուղված Սմբատ Տեր-Ավետիսյանը նշում է, որ այդ սալաքարը ծածկել է բրոնզե իրեր պարունակող մի սալարկղ. **Тер-Аветисян С.В.** Памятники древности Карабаха и скифская проблема, տես՝ **Տեր-Ավետիսյան Ս.**, Հայագիտական հետազոտություններ, Ե., 2010, էջ 178, 182: **Есаян С.А.**, նշվ. աշխ., էջ 215:

[21] **Гуммель Я.И.** Археологические очерки, Баку, 1940; **Пассек Т.** и **Латынин Б.** Очерк до-истории Северного Азербайджана, Баку, 1926, с. 121–150. **Гуммель Я.И.** Курган №2 близ Ханлара, КСИИМК, XXIV, М.-Л., 1949, с. 55–58, рис. 13_2.

րեն երկու խումբ են ներկայացնում: Դրանցից վաղը, պայմանականորեն «Գետաբեկյան» (մ.թ.ա. IX դարի վերջ – VIII դար) անվանվածը (ուշն առանձնացվում է «Կալաքենդյան» անվամբ),[22] ցույց է տալիս, որ Կուրի աջափնյա տարածքների արևելյան և հյուսիսկովկասյան արևմտյան շրջանների միջև որոշակի կապեր են եղել. դրանք հյուսիսկովկասյան ցեղերի «նախասկյութական» շրջանի տեղաշարժերի արդյունք են հանդիսանում[23]: Պատահական չէ, որ «Սակասենե» անվան առաջացման ժամանակի վերաբերյալ, որը հետազոտողների մի մասը կապում է Ստրաբոնի՝ սկյութների վերաբերող վկայության հետ, դեռևս միասնական կարծիք չկա[24]: Չծանրանալով հարցի վրա, նշենք միայն, որ այդ ցեղերի վաղ տեղաշարժերի առումով կարևորվում են նաև Արևելյան Վրաստանի հուշարձանների պեղումների արդյունքները: Համաձայն մինչև 1979 թ. կատարված աշխատանքների, սպիտակ նյութով ընդելուզված (երկրաչափական բնույթի նույն զարդերը, մարդկանց ու կենդանիների նկարները), ինչպես և վերադիր կոճակներով զարդարված բեկորներ հայտնի են Քվեմո-Քեդիից, Մելիգելե I սրբարանից, Զեմո-Բոդբեից և այլ՝ ուշ թվագրություն ունեցող հուշարձաններից: Դրանցից գտնվել են և «սկյութական» նետեր (Մոչրիլի գորա B շերտ, Մելաանիի սրբարան, Իկալտո, Արուշենդա), որոնք դրվել են մեջքին պառկեցվածների հետ: Վերջիններիս վաղագույն նմուշները Սամտավրոյի երեք դամբարանում են և Կասպիում, իսկ Իորիի ավազանում կյանքը շարունակվել է մինչև մ.թ.ա. VII–VI դդ. (Ցխինվալիում այն ավելի շուտ է դադարել): Դրա վկայությունն են հրդեհներն ու ավերումները (Մոչրիլի-գորա B շերտ, Մելիգելե II սրբարան, Արուշենդա ևն), «սկյութական» նետերով խոց-

[22] Թյուրիմացությունների տեղիք չտալու նպատակով նշենք, որ խոսքը վերաբերում է ձիու հետ կատարված թաղումներին, բայց ոչ բոլոր դամբարաններին, որոնց շարքում «սպիտակ ընդելուզված» խեցանոթներ պարունակողների մեջ կան և ավելի վաղ թվագրություն ունեցողներ (օր.՝ №№ 14, 23, 26, 49 ևն պարունակում են մ.թ.ա. II/I հազ. նյութեր): Համաձայն Ա.Ա. Իվանովսկու, պեղած դամբարաններում սովորական են եղել և նստած վիճակով թաղումները, երբ ոսկորները փոքր տարածքում են կենտրոնացած:

[23] **Погребова М.Н.** Особенности конских захоронений и конского убора в памятниках VIII – первой половины VII в. до н.э. правобережья Куры (Археология, этнология, фольклористика Кавказа (АЭФК), Тбилиси 2011, с. 208–210).

[24] **Ստրաբոն**, Աշխարհագրություն Հայաստանի ու հայերի մասին, Ե., 2011, էջ 40: **Խնկիկյան Օ.**, Սյունիքը ուրարտական ժամանակաշրջանում (ըստ հնագիտական տվյալների) (ՊԲՀ, № 3, 2016, էջ 162, 172–176):

ված կմախքները (Իկալտո, Խաշուրի)[25]: Դատելով հնագիտական տվյալներից, Տավուշը զերծ է մնացել այդ տեղաշարժերից. այստեղ նման պատկերներով (կենդանի) զարդարված, բայց չընդելուզված, մեկ խեցանոթ է հայտնաբերված (Աստղի բլուր, № 14 դամբարան), որը տեղացի բրուտագործի արտադրանք է (նկ. 3ա): Այս տվյալները հիմք են տալիս ասելու, որ մ.թ.ա. II հազ. վերջ – I հազ. սկզբում հյուսիսից Ուտիքի տափաստան մուտք գործած և այդտեղ հաստատված ցեղերը (սակե՞ր), շարունակելով առավել պահպանողական հանդիսացող թաղման ավանդույթները (մեջքի վրա, ձգված վերջույթներով), սկզբնապես նաև՝ պարզունակ խեցանոթների գործածումն ու շարժունակ կենսակերպը, աստիճանաբար ձուլվել են բնիկների հետ՝ ամուսնական կապերի միջոցով: Դրա ապացույց կարող են լինել ոչ միայն տարբեր մշակույթների պատկանող խեցանոթների համատեղ հայտնաբերումը, այլև նույն դամբարանում տարբեր ծեսերով կատարված թաղումները (օր.՝ ըստ Յա. Հումմելի, Խանլարի № 18 դամբանաթմբում կնոջ կմախքը կողքի է պառկեցված, իսկ մոտինը՝ մեջքի վրա, ձգված վերջույթներով. ավելացնենք «տոհմական» և «ընտանեկան» անվանված դամբանաթմբերը՝ նույն նյութերի խառը տեսակներով, թաղման ձևերով և այլն):

Ամենաընդհանուր գծերով ներկայացված տվյալները ենթադրել են տալիս, որ ուրարտական զինուժը չի խորացել տափաստանում, որի պատճառը հավանաբար անասնապահների շարժունակությունն էր, ցանկացած պահի դժվարամատչելի վայրերին ապավինելը և հարվածներ հասցնելը: Ուշագրավ է, որ Ա.Ա. Իվանովսկին սպիտակ ընդելուզված խեցեղեն պարունակող դամբարանների մեծ մասում «սևանյան» տեսակի դաշույններ է հայտնաբերել: Հավանական է, որ տարածքի բնակեցվածությունն ու բնաաշխարհագրական պայմանները ևս դեր են ունեցել ուրարտական զինուժի՝ Տավուշի լեռներում և անտառներում հազվադեպ երևալուն: Նրանց համար գերադասելի են եղել համեմատաբար ստվարաբնակ շրջանները: Ռուսա I-ից կրած պարտությունից հետո, որն ավարտվեց 19-ի դաշնության բնակչության գերեվարմամբ, արևելյան հատվածը Ռուսա II-ի համար դժվար թե մեծ կարևորություն ներկայացներ: Բնակչության սակավության վկայություն են նաև մ.թ.ա. VIII–VII

[25] **Пицхелаури К.Н.** Основные проблемы истории племен Восточной Грузии (XV–VII вв.), автореф. докт. дисс., Тбилиси, 1972, с. 21–25, 38, 44–48, 54–55, 70–75: **Նույնի**՝ համանուն աշխատանքը վրացերենով, Тбилиси, 1973, աղ. V, XVIII, XXVIII, XXIX, XXXVI.

դդ. ամրոցների IV–VI խմբերի նվազումը: Իրավիճակի փոփոխումը մ.թ.ա. VI–V դդ. և այդ ժամանակում IV–VI խմբերի ամրոցների աճը խոսում է բնակչության ներհոսքի մասին:

Հարց է առաջանում. ովքե՞ր էին եկողները, ի՞նչ նպատակով էին եկել և ինչպիսի՞ն են եղել նրանց փոխհարաբերությունները բնիկների հետ: Արդյո՞ք դրանք սկյութներն էին, որոնք ըստ շրջանառվող տեսակետի, մարերի հետ Ուրարտուն կործանած որոշիչ ուժ են դիտվում: Շարունակելով անասնապահների վերաբերյալ ներկայացված պատկերի մանրամասնումը, բայց միաժամանակ և սկյութական գործոնի քննությունը, նշենք միայն, որ «սկյութական» նետասլաքներ պարունակող Աստղի-բլուր, Նորաշեն, Թմբադիր և Բերդաքար ամրոցներում ավերածության կամ հրդեհի հետքեր չեն արձանագրված, իսկ հայտնաբերված նյութերի տեսականու գերակշռող մեծամասնությունը տեղական մշակույթի խեցանոթների բեկորներ են (ընդերկայնական ճեղքվածքով կանթեր, աստիճանաձև հանվածքներ, կոճակաձև զարդեր, անկյունաձև միացող թեք գծազարդեր ևն): Ուշադրություն է գրավում ուրարտական նմուշները հիշեցնող օյնոխոյաձև շուրթի բեկորը (Բերդաքար, նկ. 6ա), որը կապվելով ուրարտական հուշարձաններում (Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Օշական, Արագած, Արտաշավան, Շամիրամ, ևն)[26], սովորական հանդիսացող, Նորաշենից (նկ. 4) գտնված տերևաձև սլաքի հիմքում «խնձորակ» ունեցող երկաթե նետասլաքների, ինչպես նաև Նորաշենից և Բերդից գտնված ուրարտական դիտվող կեռշեղբ դանակների հետ (նկ. 8) կարող է, եթե ոչ ուրարտացիների, ապա նրանց միջավայրում ապրած և սերտ շփման մեջ գտնված տարրի առկայություն ցույց տալ: Թերևս հրդեհի պատրանք կարող էր ստեղծել լիցք հողից կազմված արհեստական բլրի վրա կառուցված Աչաջուր գյուղի Թմբադիր ամրոցի[27] հնագիտական իրավիճակը: Պեղված 5 կացարաններից № 1-ում բացված հորում գտնված սկյութական նետասլաքը համադրվելով № 4 սենյակի այրված աղյուսների փաստին, կարող էր նման տպավորություն թող-

[26] **Мартиросян А.А.** Аргиштихинили, Е., 1974: **Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ..** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI–VI դարերում, Ե., 2006, աղ. 73, 76, 79, 82:

[27] Լիցք հողից կազմված արհեստական բլուրների վրա են կառուցված նաև Զորաթանի, Ներքիշենի (Տավրի պաշ), Մոսեսի (Քրեղանց բլուր), Նորաշենի Պիլոր պատ ամրոցները. վերջինիս անհրաժեշտ է եղել 270 հազ. մ^3, իսկ Թմբադիրին՝ 72 հազ. մ^3 հող: Նման թվերը խոսում են մեծաքանակ և կազմակերպված աշխատուժի համաժամանակյա գործունեության մասին:

նել, եթե № 5 սենյակում վկայված չլիներին մետաղագործական աշխատանքները: Այդ է ապացուցում և կաղապարի մասը (նկ. 5ա) և հարևանությամբ բացված հնոցը: Թերևս, կասկածների տեղիք տար ընդհանուր կտուրով ծածկված 5 սենյակների և ամրոցի պարսպապատի միջև գտնվող «միջանցքում» առկա մոխրի և ածխի շերտը, որում կան կենդանիների ոսկորներ և այլ՝ թափոններ հանդիսացող նյութեր:

Համալիրների նյութերից նկատելի է, որ սկյութական զինուժին որոշիչ դեր հատկացնելը չափազանցված է: Նման կարծիքը չի մերժում և Բերդաքարից գտնված միասայր կացինը, որը համադրվում է Հյուսիսային Կովկասից և Կենտրոնական Վրաստանից հայտնաբերված մ.թ.ա. VII–VI դդ. օրինակների հետ (նկ. 6)[28]: Այնուամենայնիվ, եթե ընդունենք նույնիսկ, որ այն նման դերակատարություն է ունեցել, ապա անհասկանալի կմնա սոսկ 4 ամրոցում սկյութական նյութի առկայությունը: Ինչո՞ւ ավերածության հետքեր չկան մյուս ամրոցներում, այն դեպքում, երբ դրանք ակնհայտ են սկյութական նյութ չպարունակող հուշարձաններում: Օրինակի համար կարելի է նշել Ծաղկավանից 6 կմ հարավ գտնվող և խմբում կենտրոնական նշանակություն ունեցող, լավ ամրացված Կալ-քար ամրոցը, որտեղ առկա են հրդեհի հետքեր, այրված հողի և ածխացած փայտի կտորներ: Ամբողջությամբ տեղական մշակույթի արտադրանք պարունակող այս հուշարձանի համար պահակային նշանակություն են ունեցել Սև-սև քարերի բլուր, Սև-սև քարերի թախտ, Բախրի-խաչ ամրությունները, որոնցից միայն տեղական նյութեր են հայտնաբերված: Դրանցից չեն տարբերվում և Ենոքավանից 8 կմ հեռավորության վրա գտնվող Բերդատեղ ամրոցի № 2 և № 3 կացարաններից գտնվածները. այդ սենյակներում այրված հող, ածխացած գերանների կտորներ և ավերված պատերից թափված քարեր են: Հետաքրքիր է, որ պատերի թույլ շարվածք ունեցող տաճարը, որի առջևում ընդարձակ հրապարակն է (600 մ^2), ավերված չէ, ինչը թերևս հուշի տեղացիների և նրանց բնակարանները հրդեհողների հավատակից լինելը: Հրդեհից և ավերումից առաջացած նույն պատկերն է դիտված և IV Շահլամա («Հաղթանակ» ավան) կոչվող, 4,5 հա տարածք զբաղեցնող խոշոր ամրոցում, որը նույնպես լավ է ամրացված: Առկա տվյալներից նկատելի

[28] **Мартиросян А.А.** Город Тейшебаини, с. 284, 290; **Погребова М.Н.** Железные топоры скифского типа (СА, 1969, № 2, с. 179 и др.); **Есаян С.А.**, նշվ. աշխ., էջ 93:

է, որ հարձակման թիրախ են եղել արևմտյան հատվածի խոշոր, լավ ամրացված կենտրոնական ամրոցները, որոնք հնարավոր է, դիմադրություն են ցույց տվել: Այդ ամրոցներում, սակայն, սկյութական սլաքներ չեն գտնված, ինչը կասկած է առաջացնում սկյութական վարկածի իրավացիության հանդեպ. այն չեն հաստատում Ժ. դը Մորգանի Մուսիերիում (մ.թ.ա. VII դ. վերջ – VI դ.), Ն.Յա. Մառի Ակներում (մ.թ.ա. V–IV դդ.) և Հ.Հ. Մնացականյանի կողմից Ղաչաղանում՝ վաղ և ուշ շրջանի սկյութական նետերի հայտնաբերման փաստերը: Այդ նյութերը կարող են սոսկ վկայել եկվորների շարքերում սկյութական առանձին խմբերի առկայությունը, որոնք օժանդակ նշանակություն են ունեցել:

Կասկած է հարուցում նաև մարական զինուժի՝ Ուրարտուն «կործանելու» գործում անմիջական և որոշիչ դերակատարություն ունենալու տեսակետի իրավացիությունը թեկուզ այն պատճառով, որ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ Ուրարտուն «կործանած» պետությունը պետք է նվաճած տարածքները «նվիրեր» հարավից կամ արևմուտքից «տեղաշարժված» ու «սփռված» հայերին: Դժվարություն է առաջացնում և այդ տեսակետը հնագիտական նյութով հիմնավորելու փորձը: Իրոք, եթե անտեսենք նույնիսկ ուրարտական մշակույթի ազդեցությունը, որը հաստատվում է նորանոր տվյալներով[29] և ենթադրենք, թե հայտնաբերված նյութերից փիալաձև թասերը մարական մշակույթին բնորոշ նմուշներ հանդիսանալով՝ բերվել են մարական զինուժի կողմից, ապա անհասկանալի կմնա, թե ինչո՞ւ Իրանին հատկանշական «դասական եռանկյունաձև գունազարդով» խեցեղենը բացակայում է տարածաշրջանում: Հակառակ դրա, այստեղ տեսնում ենք փիալաձև խեցանոթների բեկորներ, որոնք նախաձև հանդիսանալով փիալաների համար, երևան են բերում որոշ առանձնահատկություններ, որ տարաբնույթ ազդեցությունների արդյունք կարող են լինել: Իբրև ապացույց կարելի է նշել ոչ միայն Վանաձորի Թագավո-

[29] Մանրամասները տես՝ **Тирацян Г.А.** Урарту и Армения (к вопросу о преемственности материальной культуры) (ԼՀԳ, 1968, № 2, էջ 18–19): **Նույնի՝** Опыт периодизации истории материальной культуры древней Армении (ՏՀԳ), 1957, № 2, էջ 79: **Նույնի՝** Культура древней Армении, VI в. до н.э. – III в. н.э., Е., 1988.

ռանիստ բնակավայրից[30], այլև՝ Տանձուտից (մ.թ.ա. VII–VI դդ.) հայտնաբերվածները (նկ. 7): Դրանք վերին մասում գոգավոր և շեշտված անցումով, ստորին հատվածին անցնող կողեր ունեն, որոնք ավարտվում են թեթևակի դուրս թեքվող շրթով. դրանցից մեկը բարակ է, մյուսը՝ լայն, հարթ կտրած և ցած թեքվող տեսք ունեն: Օրինակներից մեկի շուրթը կտրվածքում սուրանկյան ձև ունի և նմանվում է նույն հուշարձանից գտնված, կոտրատվող անցումներով, ձևավոր կողեր ունեցող խեցեբեկորին: Ինչ վերաբերում է փիալաձև բեկորներին, ապա դրանք մի դեպքում գոգավորվող և ստորին հատվածին ընդգծված անցումով միացող ձևավոր կող, մյուսում՝ ստորին մասում թեթևակի կլորացող տեսք ունեն և ավարտվում են փոքր-ինչ դուրս թեքված կամ փռված ձև ունեցող շրթով: Նորաշենից (նկ. 4), Պիլոր-պատից, Ջուջևանից, Բերդից (նկ. 8) հայտնաբերված այս թասերի հատակները մի դեպքում հարթ, մյուսում՝ գոգավոր են: Առանձին նմուշների վրա առկա են հորիզոնական, թեթևակի վեր թեքված բռնակներ, որոնք Ս.Ա. Եսայանի կարծիքով կարող են տեղական օջախի հատկանիշ դիտվել: Այս թասերը, ինչպես և նշվել է գրականության էջերում[31], իրենց ձևերով նման են Հասանլու III B, Զիվիյե, Սիակ B «եռանկյունաձև գունազարդով» ամաններին, որոնք թվագրվում են մ.թ.ա. VII դ. վերջ – VI դ. սկզբով: Ներկայացված նյութերի մ.թ.ա. VI դ. թվագրության օգտին են վկայում և Հասանլու III A փուլին պատկանող շերտից հայտնաբերված փիալաձև թասերը, որոնք ավելի կատարյալ և նոր ձևերով ներկայացված լինելով, հուշում են իրենց երիտասարդ տարիքը. III A, իբրև «նախաաքեմենյան» առանձնացված շերտի ստորին սահմանը մ.թ.ա. 508 թ. է[32]: Հայտնաբերված նյութերի վաղ թվագրությունն են հուշում և կեռշեղբ դանակներն ու հիմքում խնձորակ ունեցող նետերը. դրանք ցույց են տալիս ոչ միայն քննված համալիրների, անմիջապես հետուրարտական շրջանին պատկանելը, այլև հարստացնում են ժամանակաշրջանի պատմական իրավիճակի վերաբերյալ առկա պատկերացումները: Նյութերի քննությունը ենթադրել է տալիս, որ Թեյշե-

---

[30] **Փալանջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 175–178: Շնորհակալություն ենք հայտնում Ռ. Բադալյանին Թագավորանիստի C_{14} տվյալներին (մ.թ.ա. VII դ. I կես – կեսեր) ծանոթացնելու համար:

[31] **Мартиросян А.А.** Аргиштихинили, Е., 1974, с. 53.

[32] **Dyson R.**, The Achaemenid Painted Pottery of Hasanlu III A, Anatolian Studies, Vol. 49, 1999, p. 101.

բաինին շրջապատած Երվանդը զինուժի մի մասով շարունակել է միջնաբերդի ու քաղաքի կենտրոնական շրջանների պաշարումը, մյուսը՝ հյուսիս է շարժել. չի բացառվում, որ վերջիններիս շարքերում լինեին և Թեյշեբաինին կառուցելու ժամանակ հյուսիսից բերված բնակիչների սերունդները՝ սկյութական առանձին ջոկատների և մերձուրմյան տարածքների փոքր խմբերի հետ: Տարբեր մշակույթների պատկանող հնագիտական նյութը այդ զինուժի խայտաբղետությունն է մատնանշում, որի մեջ հիմնականը տեղականն է[33]: Տարածքի արևելյան հատվածի կազմակերպված, մեծաքանակ աշխատուժի արդյունք հանդիսացող ամրոցների ու արհեստական բլուրների կառուցումը, ըստ իս, ռազմական այս ստորաբաժանումների ձեռքի գործն է: Տարածքը արագ բնակեցնելով՝ Երվանդը նպատակ ուներ հնարավորինս շուտ ամրապնդել նորաստեղծ պետության հյուսիս-արևելյան շրջանները, իրեն ենթարկելով և հսկողություն սահմանելով տոհմացեղային տարանջատվածության ավանդույթներին կառչած կենտրոնախույս առաջնորդներին: Կազմավորվող պետության գերակա շահերը, որոնք կյանքի են կոչվել բռնությամբ (առանձին կենտրոնական ամրոցների ավերում), տեղական ազդեցիկ անձանց սիրաշահմամբ ու մերձեցման, բարեկամական և տարաբնույթ այլ կապեր հաստատելու միջոցով, այդ էին պահանջում: Անհնար է անտեսել և ոչ միայն ժողովրդի եկվորության տեսակետը մերժող տեղական մշակույթի ակնհայտ ժառանգականության փաստը (բազմաթիվ օրինակներից նշվի թեկուզ նկ. 3ա, 3բ), այլև՝ Ուտիքի Տուի գավառի իշխանի Վարդգես անունը: Եթե ասվածին ավելացվի և Գր. Ղափանցյանի կարծիքը eti(u) արմատի էթնիկ ծագում ունենալու վերաբերյալ,[34] ապա Երվանդի արագ առաջխաղացման և տարածքների միավորման գործընթացը, որը դժվարությամբ էր տրվում նման հենարանից զուրկ ուրարտական արքաներին, տարակուսելի չի թվա:

Հարց է առաջանում. արդյո՞ք նման իրողությունը չի հակասում Ստրաբո-

---

[33] Տեղական զինուժը կարող էր օգտագործել և ուրարտական նետեր: Այս տեսակետից կարևոր է Թեյշեբաինի միջնաբերդում մետաղագործի արհեստանոցի բացակայությունը, բայց և վերածուլման ենթակա իրերի ու կիսապատրաստուկների առկայությունը, որոնք վերջնական արտադրանքի էին փոխարկվում քաղաքի արհեստավորների կողմից. տես՝ **Мартиросян А.А.** Город Тейшебаини, с. 99.

[34] **Капанцян Гр.** Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Е., 1940, с. 9–20. Հմմտ. **Дьяконов И.М.** Предыстория армянского народа, Е., 1968, с. 17 и след.

նի՝ Հայաստանի բնակչության միալեզու դառնալու վկայությանը և երկրորդ՝ ինչո՞ւ XVIII սատրապության կազմում ընդգրկված ժողովուրդների ցանկում բացակայում են հայ կամ արմեն անվանումները: Ստրաբոնի վկայության դեպքում, համոզիչ է, որ խոսքը վերաբերում է ոչ թե ժողովրդի եկվորությանը, այլ՝ շարունակական բնույթ կրող վերաբնակեցումների հետևանքով ստեղծված տարէթնիկ կղզյակներին: Օրինակներից մեկը կարող է հանդիսանալ թեկուզ մեծաքանակ մարերի վերաբնակեցման դրվագը: Այս տեսակետից ուշադրություն է գրավում Շամքորի շրջանի Բարսում գյուղից (Տիգրանակերտ) հայտնաբերված, մ.թ.ա. VI–V դդ. թվագրվող նյութերի նույնությունը Մեղրի-Կապանի համալիրներից գտնվածների հետ[35]: Հետևաբար սպասելի է, որ նման նյութեր կհայտնաբերվեն և Նախիջևանում: Տարակուսանք չի կարող առաջացնել և ուշ կազմավորված XVIII սատրապության հարցը, որը հանգամանորեն լուսաբանված է[36]: Խուսափելով կրկնություններից՝ նշենք միայն, որ սկզբնապես Հայաստանը մեկ ամբողջություն է կազմել, չնայած որ Աստիագի ժամանակ արդեն Մարական թագավորությունն ընդգրկում էր XIII և XVIII սատրապությունների տարածքը, բայց Հայաստանը, ենթակա կարգավիճակ ունենալով հանդերձ, ինքնուրույն պետություն էր, որը որոշակի հարկ և զինուժ էր տալիս: Ըստ իս, Սարը-թեփեի մ.թ.ա. I հազ. կեսերով թվագրվող հրդեհված պալատական համալիրը, որն ամենայն հավանականությամբ Աստիագի տեղակալի կամ փոխարքայի նստավայրն էր, կողոպտվել և հրդեհվել է հիմնականում Տիգրանի զինուժի կողմից[37]: Այդ են հուշում ոչ միայն պատմական աղբյուրների տվյալները, այլև թերի հրապարակված սակավաթիվ այլ նյութերի (կարմիր մակերեսով կարասի և գոգավոր հատակով փիալաների) բեկորներ, որոնցից սոսկ մեկ փիալա է ներկայացված (նկ. 2դ): Վերջինս ձևով կրկնելով Բերդից և Նավուրից հայտնաբերվածներին, ստորին մասում առկա վարդակների տեսքով կրկնում է Շեյթան-դաղից, Խրտանոցից և Կարմիր-բլուրից գտնված մ.թ.ա. VI–V դդ. թվագրվող զարդերը: Սարը-թեփեի համալի-

---

[35] Այդ նյութերի մասին տես՝ **Խնկիկյան Օ.Ս.,** Սյունիքը ուրարտական ժամանակաշրջանում, էջ 171, ծանոթ. № 27:

[36] **Дьяконов И.М.** История Мидии, М.-Л., 1956, с. 341–350.

[37] Դժվար է ենթադրել, որ ընդարձակվող կայսրության տարալեզու բնակչությանը հոժարակամ հնազանդության մեջ պահելու համար «հայր Կյուրոսը», որը լավ էր հասկանում ամրոցների անհրաժեշտությունը, հոժարակամ մասնակցեր Սարը-թեփեի համալիրի ավերմանը:

րի վաղ թվագրության մասին են խոսում և Շամքորի շրջանի Քարաջամիրլի հնավայրի, Պերսեպոլիսի՝ Քսերքսեսի (մ.թ.ա. 486–465 թթ.) պալատի մանրամասները կրկնող համալիրի պեղումների արդյունքները (աղյուսների չափերը 32x32 սմ, սյունազարդ դահլիճը, նուրբ աշխատանքի արդյունք՝ գեղեցիկ զարդարված «զանգակաձև» խարիսխները և այլն)[38]:

Հոդվածի շրջանակներից դուրս գտնվող այս հարցերը այլ հետազոտության նյութ են: Ամփոփելով առաջադրված հարցերի վերջնական պատասխանի չհավակնող ներկա քննության արդյունքները, տեսնում ենք, որ ուշադրությամբ հետևելով նույն՝ ծավալապաշտական քաղաքականությամբ առաջնորդվող Աստիագի ու Կյուրոսի քայլերին և լավ հասկանալով նրանց հեռահար նպատակները, Երվանդն ու Տիգրանը աշխատելով հնարավորինս արագ իրագործել նորակազմ պետության սահմաններում գտնվող տարածքների միավորումն ու ամրապնդումը, առաջնային ուշադրություն են դարձրել հյուսիս-արևելյան և արևելյան սահմաններին, որտեղից նրանք անմիջական վտանգ էին տեսնում[39]:

СЕВЕРО-ВОСТОЧНАЯ АРМЕНИЯ В VII-VI ВВ. ДО Н.Э. (По археологическим данным)

ХНКИКЯН О.

Резюме

Ключевые слова: *Северо-восточная Армения, сепаратные группы, III период железа, фортификация, некрополи, Урарту, Армения.*

Анализ материала показывает, что из числа циклопических сооружений

[38] **Gagoshidze A.I.**, South Caucasus and Achaemenids, տես՝ «Արագածի թիկունքում, Հնագիտական հետազոտություններ նվիրված Տ.Ս. Խաչատրյանի հիշատակին», Ե., 2018, էջ 225–230:

[39] Ասվածից չի հետևում, թե Երվանդ-Տիգրանը բավարարվել են սոսկ հյուսիս-արևելյան տարածքները ամրապնդելով (Տիգրանակերտի կառուցումն ու Տիգրանուհուն այնտեղ բնակեցնելը). թագավորական իշխանությունը նորաստեղծ միասնական պետության ողջ տարածքում ամրապնդելուն էր ուղղված և Վարդգեսավանի կառուցումը:

области 29 сконцентрированы в долинах рр. Агстев и Дебед (западная часть), а 24 – в бассейне рр. Ахум и Асрик (восточная часть, IV–VI группы). На раннем этапе (до VII в. до н.э.) плотность застройки крепостей на западе (I–III группы) составляет 25%, а на востоке – 9%. Их соотношение меняется в VI–V вв., в восточной части составляя 47%, а в западной – 15,6%, что явствует о притоке населения. Строительные работы на восточном участке связаны с деятельностью Ерванда Кратковечного, который, подчинив себе центробежные силы, попытался не только объединить территории государства, но и укрепить его восточные границы.

NORTH-EAST ARMENIA DURING VII–VI CC. B.C.
(On archaeoogical data)

KHNKIKYAN O.

Summary

Key words: *north-eastern Armenia, separate groups, iron age III, fortification, necropolis, Urartu, Armenia.*

The subject matter points out that in district 29 cyclopean structures are located in the Debet-Aghstev (western part) and 24 – Hakhum-Asrik's (IV–VI groups) stream valley. In the period (till VII B.C.) the concentration of the fortresses in the western part (I-III groups) compose nearly 25%, whereas in the eastern 9%. The correlation changes in the course of time. The Eastern part increases by 47%, while the western – by 15,6%, which is testified by the local materials and the dense population. The building activities on the eastern part are connected with the activities of Yervand Sakavakyats who, having subjugated the centrifugal forces made an attempt to consolidate the territories of the New State and strengthen its eastern borders.


ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԵՐԸ
(ըստ Ս.Ս. Եսայանի)
Նորայր
Ծաղկաբերդ
Գեղարքունիք
Լճաշեն
Մեծամոր
Գեղամա լեռներ
Գառնի
Ամրակալ
Դվին
Արտաշատ
Ուրարտու
Ալիշար
Ալաշկերտ
Դարբաշան
Ամիրան
Գանձակ
Գետաշեն
Գեղարոտ
Գեղանիստ
Գեղանիստ
Գեղանիստ